Արձանագրություն N 2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար չհրկիզվող պահարանների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՉՊ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

24 հուլիսի 2025թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Թումանյան, Ա. Հայրապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Արպանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)*
1	Չհրկիզվող պահարաններ	***30 720 000***

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 22.07.2025թ.-ին ժամը 12:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 23.07.2025թ.-ին ժամը 12:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.

Հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1	«ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲԸ	ՀՎՀՀ՝ 05526834, ՀՀ ք. Գյումրի Երևանյան խճ. 145/9, karatmachine@rambler.ru, հեռ. (0312)5-18-40

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՉՊ-25/2 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

1.1 12.07.2025թ.-ին և 14.07.2025թ.-ին հնարավոր մասնակիցների կողմից գնումների https://eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ստացվել է հարցումներ **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՉՊ-25/2** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով նախատեսված չհրկիզվող պահարանների ձեռքբերման տեխնիկական բնութագրի վերաբերյալ:

14.07.2025թ.-ին և 16.07.2025թ.-ին գնումների https://eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հնարավոր մասնակիցներին ուղարկվել է հարցումների պատասխանները:

Հարցում 1. «Խնդրում ենք առկայության պարագայում տրամադրել գծագիր կամ նկար:»:

Հարցում 2.« Հարգելի պատվիրատու, խնդրում եմ ավելի մանրամասն ներկայացրեք ինչ է նշանակում տեխնիկական բնութագրում գրված 3D կտրվածքով պահանջը:»:

Պարզաբանում 1. «Հարգելի՛ գործընկեր, ի պատասխան Ձեր հարցմանը, տեղեկացնում ենք, որ առկա չէ գծագիր, սակայն հաղթող ճանաչված մասնակցից ակնկալվում է հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրով նշված չափերի շրջանակներում ներկայացնել մատակարարվող ապրանքի գծագիր /էսքիզ/ պատվիրատուի հետ համաձայնեցման:»

Պարզաբանում 2. «Հարգելի՛ գործընկեր, ի պատասխան Ձեր հարցմանը, տեղեկացնում ենք, որ տեխնիկական բնութագրում օգտագործված «3D» ձևակերպումը պահանջ չէ: Պահարանը եռաչափ տարածական պատկեր դիտարկելու

դեպքում չափերը պետք է լինեն՝ բարձրությունը՝ 1500մմ (գտնից), երկարությունը՝ 650մմ, լայնությունը (խորությունը)՝ 450մմ:»

6. Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Չափաբաժնի համար	Գնման առարկայի անվանումը	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	Ձիրկիզվող պահարաններ	«ՔԱՐՀԱՏ ՄԵՔԵՆԱ» ՓԲԸ	30720000	25599900	20 %	30719880	25599900	20 %	30719880.00

Աճուրդն ամփոփվել է 23.07.2025թ.-ին և Համակարգի կողմից

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **«ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲԸ-ն:**

7. Համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին տվյալներ

7.1 Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած հայտը, արձանագրեց, որ Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲԸ-ի** հայտում առկա է անհամապատասխանություն՝ մասնակիցը, համաձայն հրավերի 7.1 կետի, պետք է սահմանված կարգով ներկայացներ հայտի ապահովում, սակայն հայտի ապահովում չի ներկայացվել /չի կցվել/:

7.2 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲԸ-ի** հայտը չի բավարարում սույն ընթացակարգի հրավերի պահանջներին և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետը և սույն ընթացակարգով հրավերի պահանջները.

Հանձնաժողովը որոշեց.

Մերժել առաջին տեղ զբաղեցրած մասնակից **«ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲԸ**-ի հայտը:

7.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ընթացակարգը հայտարարել չկայացած:

7.4 Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գևորգ Խաչատրյան

անդամներ՝ _____ Աննա Թումանյան

_____ Անի Հայրապետյան

քարտուղար՝ _____ Նաիրա Բաբայան